# Հայաստան – ապագայի ռազմավարությունը

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, փետրվարի 27-ին Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի շրջանակներում, հանդիպում է ունեցել նաեւ Մոսկվայի հայ համայնքի, գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ՀՀ վարչապետի ելույթն ուղեկցվել է համապատասխան սլայդների ցուցադրմամբ, որը եւ ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

# Հայաստան – ապագայի ռազմավարությունը

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
տ.գ.թ. Տիգրան Սարգսյան

# Ներածություն
# Ճգնաժամի երկու գոյաբանությունը

- Ճգնաժամը տնտեսական շրջափուլի հերթական փուլն է Հին աշխարհի շրջանակներում

- Տնտեսության վերականգնումը նոր մակարդակով՝ ինդուստրիալ աշխարհի տրամաբանությամբ

- Ճգնաժամը քաոսի՝ որպես Նոր աշխարհի ձեւավորման հիվանդագին փուլի դրսեւորումներից մեկն է:

- Որակապես նոր՝ հետինդուստրիալ աշխարհի ձեւավորումը:

*տես՝ Տ.Ս. Սարգսյանի «Պետության վախճանը» հոդվածը, www.gov.am

# Հանդիպում ապագայի հետ

Հակաճգնաժամային միջոցառումների փաթեթի իրագործում

Հասարակության հետինդուստրիալ մոդելի ձեւավորում

Անկախ ապագայի սցենարից, աշխարհն այլեւս չի լինի նախկինը, եւ անհրաժեշտ է աշխատել երկու հարթություններում

# Գլոբալ ձեւափոխումներ

**Վերադարձ հնին**

- Շարժում բարդից դեպի պարզը,
- Գլոբալիզացիայի փուլի արգելակումը- լոկալիզացիա
- Հովանավորչության ծավալում,
- Պետությունների միջամտությունը տնտեսական հարաբերություններին,
- Համընդհանուր անվստահություն,
- Պոպուլիզմի աճը` սոցիալական լարվածության պայմաններում,
- Քրեական իրավիճակի վատթարացում:

**Նորի ծննդյան նախանշանները**

- Փլուզման եւ վերականգնման տրամաբանության բացակայություն,
- Հաջողության չափանիշների փոփոխություն եւ արժեքների վերագնահատում,
- Ուժի եւ ռեսուրսների կենտրոնների վերադասավորում,
- Մասնավոր սեփականության եւ մրցակցության ինստիտուտների քայքայում,
- Գլոբալ ինստիտուտների չկայացածություն,
- Կառավարման ճարտարապետության փոփոխություն:

# Ընթացիկ իրավիճակի մինուսները

- Բնական պաշարների համաշխարհային գների կտրուկ անկում, որպես հետեւանք` հումքային ոլորտներում արտահանման կրճատում,
- Ներմուծման կանոնների խստացում, Հայաստանի գործընկեր երկրներում պահանջարկի նվազում, որպես հետեւանք` բոլոր ոլորտներում արտահանման կրճատում,
- Գործազրկության պոտենցիալ աճ,
- Այն քաղաքացիների սոցիալական իրավիճակի վատթարացում, ում եկամուտների մեծ մասն էին կազմում տրանսֆերտները,
- Մասնավոր շինարարության դադարեցում,
- Հայաստանի տնտեսության մեջ մասնավոր ներդրումների կրճատում,
- Միջազգային գործարքների գծով վճարումների ուշացում,
- Քրեական եւ կոռուպցիոն ռիսկերի մեծացում:

# Ընթացիկ իրավիճակի պլյուսները

- Մակրոտնտեսական կայունության պահպանում,
- Արտաքին ինֆլյացիոն ճնշման կրճատում,
- Բանկային համակարգը` դիմանալով ֆինանսական ճգնաժամի առաջին ալիքին, պահպանում է իր կայունությունը,
- Ցածր պետական արտաքին պարտքը` որպես անվտանգության բարձիկ, բարենպաստ պայմաններ է ստեղծում արտաքին փոխառությունների համար,
- Ինստիտուցիոնալ ներդրողներին եւ վարկավորողներին (WB, IFC, EBRD, Զարգացման Ասիական բանկ եւ այլն) ներգրավման հնարավորությունների ընդլայնում,
- Հայաստան որակյալ բանվորական ուժի ներհոսքի պոտենցիալ,
- Ինովացիոն սարքավորումների եւ տեխնոլոգիաների գների անկում,
- Պետության նկատմամբ անվստահության աճ` ճգնաժամի պայմաններում,
- Հին սխալներն ուղղելու լայն հնարավորություններ,
- Որոշ բարեփոխումների հետաձգման անհնարինություն:

# Կառավարության գործունեության սկզբունքները

- Խոսք ð գործողություն ð արդյունք,
- Կարգապահություն եւ կարգ ու կանոն,
- Հրապարակայնություն եւ հասարակական վերահսկողություն,
- Որոշումների ընդունման օպերատիվություն եւ միջոցառումների համալիրություն,
- Նախագծային մոտեցում,
- Պետական-մասնավոր գործընկերության սկզբունք,
- Բիզնեսից դուրս գալու ռազմավարության առկայություն,
- Հավաքական խորհրդատվությունների պարտադիր անցկացում:

# Մաս I.
# Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների փաթեթ

- **Սարքավորումների եւ տեխնոլոգիաների ներկրման դիմաց մուծվող ԱԱՀ-ի հետաձգում,**
- **Պետական աջակցություն արտահանող ձեռնարկություններին.**
  - Պետական երաշխիքներ,
  - Վարկեր,
  - Անմիջական մասնակցություն կապիտալում,
  - Սուբսիդավորում (այդ թվում՝ գյուղատնտեսության),
- **Համակարգ ձեւավորող եւ ներմուծմանը փոխարինող բնագավառների զարգացմանն ուղղված նախագծերի ֆինանսավորում.**
  - Նույնը +
  - Որոշ տեսակի ապրանքների մաքսային սակագների բարձրացում,
- **Մասնագիտացված արտահանող ձեռնարկությունների ստեղծում, որոնց նպատակն է՝**
  - Արտահանման ներուժի համախմբումն ու օպտիմալացումը,
  - Մանր ձեռնարկատերերի արտադրանքի ստանդարտացումը եւ սերտիֆիկացումը,
  - Արտահանման տրանզակցիոն ծախսերի կրճատումը,
- Ներգրավում GSP+ համակարգում, որն ապահովում է Հայաստանից Եվրամիություն արտահանվող ապրանքների մաքսատուրքի էական նվազում:

# Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների փաթեթ (2)

- Տարածաշրջանային եւ ազգային ներդրումային նախագծերի իրագործում,
  - Նոր ատոմակայանի կառուցման նախագիծ- տարածաշրջանային (կայունացման) նախագիծ,
  - Ճանապարհաշինություն (1000 կմ ճանապարհներ 2009 թվականին),
  - Հայաստանի ամբողջ տարածքում ջրամատակարարման համակարգի վերականգնման նախագիծ,
  - Գյումրիում եւ Սպիտակում (Վարպետաց թաղամաս) աղետի գոտու վերականգնման նախագիծ:

# Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների փաթեթ (3)

- **Աջակցություն փոքր եւ միջին բիզնեսին.**
  - Համաշխարհային բանկի, ՎԶԵԲ-ի, Ասիական բանկի օժանդակությամբ փոքր եւ միջին բիզնեսի լրացուցիչ ֆինանսավորում՝ բանկերի եւ այլ ֆինանսական ինստիտուտների միջոցով,
  - Որոշ ժողովրդական արհեստների ազատում բոլոր տեսակի ձեռնարկատիրական հարկերից,
  - Սպասարկման որոշ ոլորտների անցում հաստատագրված վճարի:
  - Մինչեւ 100 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող ձեռնարկությունների համար հաշվապահական հաշվառման վարման պարտադիր կանոնի վերացում եւ պարզեցված հարկային հաշվետվությունների ներդրում:

# Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների փաթեթ (4)

- Պետական երկարաժամկետ վարկերի ներգրավում՝ հակաճգնաժամային միջոցառումների իրականացման նպատակով,
- Պետական ոչ նպատակային ծախսերի կրճատում,
- Պետական ապարատի արդյունավետության բարձրացում եւ լիակատար թափանցիկություն հակաճգնաժամային միջոցառումների իրականացման գործում,
- Պետական գնումների համակարգի կատարելագործում: Պետական գնումների իրականացման ժամանակ նախապատվությունը տրվելու է հայկական ապրանքներ եւ ծառայություններ մատակարարողներին, այդ թվում նաեւ փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչներին,
- Ընդդիմությանը հրավիրում մասնակցելու հակաճգնաժամային եւ հակակոռուպցիոն ծրագրի մոնիտորինգին:

# Մաս II.
# Հետինդուստրիալ հասարակություն. Հիմնական բնութագրումներ

- Հենքային գործընթացը` գիտելիքի արտադրություն,
- Հիմնական ռեսուրսները` ինտելեկտ, մտագործունեություն,
- Կառավարման համակարգը` ցանցային,
- Հաջողության չափանիշները` գիտելիք,
- Վարքի հիմքը` ինքնահիրացում:

# Պետական քաղաքականության առաջնահերթությունները հետինդուստրիալ հասարակության մեջ

- Ինովացիոն տեխնոլոգիաներ,
- Առողջապահություն,
- Կրթություն,
- Ֆինանսներ,
- Կազմակերպված հանգիստ,
- Բիզնես գերազանցության կենտրոն:

# Մեր հանդիպման նպատակն է՝ նոր հայկական աշխարհի ձեւավորումը

- Հայկական աշխարհը զարգացման նոր տարածք է, որը Հայաստանն ու սփյուռքը միավորում է միասնական օրգանիզմի մեջ,
- Հայկական աշխարհը հայկական մայր երկրի (մետրոպոլիայի) եւ սփյուռքի ներկայացուցիչների մտագործունեության միասնական պլատֆորմ է,
- Հայկական աշխարհը համահայկական գլոբալ ցանցի ստեղծումն է:

*Հայկական աշխարհը մեր պատասխանն է արդիականության մարտահրավերներին՝ աշխարհակարգի նոր ճարտարապետության տեսքով:*

# Հայկական աշխարհը` ոչ ստանդարտ կառուցվածքները եւ կառավարման մեթոդներն են

- Ազգային մրցունակության խորհուրդ (ԱՄԽ), որի նպատակն է` հայության մրցունակությունը տարածքային սահմաններից դուրս:
- Ազգային մրցունակության հիմնադրամ, որի նպատակն է` Հայկական աշխարհում նախագծային դաշտի ձեւավորումը:
- «Համահայկական  բանկ», որի նպատակն է` նախագծերի ֆինանսավորումը ԱՄԽ առաքելության շրջանակներում:
- «Լույս» հիմնադրամ, որի նպատակն է` անկախ քաղաքացիությունից, հայկական ծագում ունեցող ուսանողների կրթության ֆինանսավորումը աշխարհի բարձրակարգ կրթական կենտրոններում:

# ՀՀ նախագահ Ս.Ա. Սարգսյանի սփյուռքահայությանն ուղղված հայտնի ուղերձից

«Հայաստանը մի երկիր է առանց Սփյուռքի եւ բոլորովին այլ երկիր՝ Սփյուռքով»

# Կառավարությունն առաջարկում է Հայկական աշխարհին

- Օժանդակություն Հայաստանի տարածքում «հայելային ձեռնարկությունների» ստեղծմանը,
- Հարկային պայմանագրեր խոշոր ինովացիոն նախագծերի համար,
- Պետական երաշխիքներ այն նախագծերին, որոնք նախատեսում են աշխատատեղերի ստեղծում եւ/կամ արտահանում,
- Հողի եւ արտադրական հզորությունների տրամադրում երկարաժամկետ վարձակալության համար,
- Բիզնեսի խոչընդոտների հաղթահարում՝ ՀՀ կառավարությանը կից օպերատիվ շտաբի մակարդակով,
- ՀՀ կառավարության կողմից իրականացվող ենթակառուցվածքային նախագծերին մասնակցության իրավունք,
- Վստահելի բանկեր՝ խնայողությունները պահելու համար:

# Ճգնաժամը մեր հնարավորությու՛նն է

Երբ մեզ մարտահրավեր է նետված, ՀԱՅԵՐԸ.

- Դրսեւորում են ազգի ինքնակազմակերպման առավելագույն աստիճան,
- Ցուցադրում են նոր իրողություններին հարմարվելու ընդունակություն:

*Ճգնաժամը՝ ակունքներին վերադառնալու ժամանակն է:*

*Ճգնաժամը՝ հին կանխակարծություններից եւ սխալներից ազատվելու ժամանակն է:*

*Ճգնաժամը՝ ժամանակն է ցուցադրելու ամբողջ աշխարհին, որ հնագույն ազգի իմաստնությունը արդի իրողություն է:*

# Տանը Ձեզ սպասում են

## Բարի գալուստ հայկական աշխարհ

Հայաստանի Հանրապետության կառավարություն

www.gov.am